

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2014 թվականի հուլիսի 3-ի թիվ 712-Ն որոշման մեջ
լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»
ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

___ ___-ի N___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N 712-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ Մ Ա Ն** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Չինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» N 712-Ն որոշման 8-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 15-րդ կետի 12-րդ ենթակետից հանել «, պարեկային գումարտակի հրամանատար» բառերը,

2) 15-րդ կետի 13-րդ ենթակետում «պարեկային գումարտակի հրամանատարի տեղակալ» բառերը փոխարինել «պարեկային գումարտակի հրամանատար» բառերով,

3) 15-րդ կետի 14-րդ ենթակետում «Գնդի գումարտակի հրամանատարի տեղակալ» բառերից հետո լրացնել «պարեկային գումարտակի

հրամանատարի տեղակալ,» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի ապրիլի 3-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՎԱՐՉԱՊԵՏ
ՓԱՇԻՆՅԱՆ**

Ն.

2022թ.

« » _____

Ք. Երևան